



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2013թ. ԹԻՎ 33/6-Լ
ՈՐՈՇՄԱՄԲ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
«ԱՆՂԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Սարգսյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի՝ 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգում (**այսուհետ՝ Կարգ**) լրացում կատարելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ լինում են Պալատի անդամ հանդիսացող փաստաբաններ, որոնք արտոնության համար դիմում ներկայացնելու պահին ունենում են անդամավճարի պարտք, սակայն բացառիկ դեպքերում, մասնավորապես ֆինանսական կամ ընտանեկան այլ ծանր հանգամանքներից ելնելով այդ պահին հնարավորություն չեն ունենում վճարել պարտքը, ինչի հետևանքով, արտոնությունից զրկվում են,

նկատի ունենալով նման փաստաբանների համար անդամավճարի արտոնություն սահմանելու հնարավորություն ընձեռելու անհրաժեշտությունը,

դեկլարավելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ և 15-րդ կետերի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Կարգի 13-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Բացառիկ դեպքերում, ֆինանսական տնօրենի առաջարկությամբ Պալատի նախագահը կարող է սույն կետում նշված արտոնությունը կիրառել, եթե փաստաբանն ունի անդամավճարի պարտք:**»

17 օգոստոսի 2021թ.
թիվ 12/27-Լ

2. Հանձնարարել ֆինանսական տնօրենին՝ Պալատի նախագահի լուծմանը ներկայացնել փաստաբանների նախկինում ընթացք չտրված դիմումները:

3. Սույն որոշմանը տալ հետադարձ ուժ:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

17 օգոստոսի 2021թ.
թիվ 12/27-Լ
ք. Երևան